



ՊԱՏՄԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ. ԴՌԿՏՈՐ Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

XXI ԴԱՐԻ ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԲՋ



Ուլհաննես Սարկավազը, որը հայտնի է «Սուփեստոս», «Պոե-տիկոս», «Տոմարագետ» և այլ մականուններով, հայ մատե-

նագրության աչքի ընկնող դեմքերից մեկն է։ Նրան, որպես գիտուն անձնավորության, բարձր են գնահատել իր թողած գրական վաստակների հետ ծանոթ միջնադարյան հայ գրեթե բոլոր պատմիչները։ Այսպես, օրի-նակ, Կիրակոս Գանձակեցին, որն ապրել է Հովհաննեսից մեկ դար հետո, հետևյալ ձևով է բնութագրում նրան. «Մեծիմաստն գիտու-թեամբ քան զյուրովս և հանճարեղն ամենայ-նի՝ մտահարուստն Յովհաննէս...»¹։

Հովհաննեսն իր գիտությունը մեծ հոշակ է վայելել ո՛չ միայն Հայաստանում, այլև նրա շրջանակներից դուրս։ Վրացական աղբյուր-ներից մեկում՝ «Քարթլիս ցխովրեբա»-ում պահված մի տեղեկությունից երևում է, որ նա մեծ համարում է վայելել վրացական պո-ետներից և հարգվել Դավիթ թագավորի կող-մից. «Այլ ինքն թագաւորն Դաւիթ, — կար-դում ենք այնտեղ, — սիրէր զազգն Հայոց, և ղեկեղեցիսն, և զոմն հոնտոր վարդապետ ի Հաղբատ՝ Սարկաւազ անուն...»²։

Հովհաննեսի մեծությունը ճանաչել և նրա աշխատությունները ըստ արժանույն գնահա-տել են նաև հայ մատենագրության ուսում-նասիրության զբաղվող աչքի ընկնող հա-յագետները։ Այսպես, Դ. Ալիշանը, Հովհաննե-սի մասին գրած իր «Սարկավազ Սուփեստոս»

խորագիրը կրող հոդվածում, հետևյալ ձևով է բնորոշում նրա արժանիքները. «Բնատուր մեծ հանճար՝ կրթությամբ և երկար ուսմամբ կրկնակի մեծացած և զորացած, բարակա-միտ ըմբռնումն և վարպետ բացատրույուն, լեզու արվեստավոր՝ բայց հստակ և հայկա-բան, արտաքին և աստվածային գիտությանց հմտություն, քաջախոհ դատողություն, վսեմ և անխռով ոգի՝ անխոնջ հետաքննին և սիրող ստուգության, պատկառելի ծանրությանը հետ զվարճախառն ընտանություն...»³։

Հանգուցյալ պրոֆ. Մանուկ Աբեղյանը, իր «Վերածնությունը հայոց հին գրականության մեջ» հոդվածում Հովհաննեսին համարում է մեծ գիտնական, փիլիսոփա, տոմարագետ, պատմագիր, հեղինակ կրոնական ներբողնե-րի և միաժամանակ բանաստեղծ⁴։ Պրոֆ. Մ. Աբեղյանը Սարկավազի անվան հետ է կա-պում Հայաստանի վերածնության շրջանի գրական արվեստի նոր ուղղության հիմնա-դրությունը։ Նա իր «Հայոց հին գրականու-թյան պատմության» մեջ Սարկավազին հա-մարում է վերածնության առաջին արտա-հայտիչներից մեկը. «Մեր վերածնության նոր մտավոր հոսանքի առաջին արտահայտիչնե-րից մեկն է Հովհաննես Սարկավազ վարդա-պետը» — գրում է նա⁵։

Հովհաննեսի անձնավորության մասին մեզ տեղեկություններ են հաղորդում, հիմնակա-նում, հայկական հետևյալ չորս պատմիչները՝ Սամուել Անեցից, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին և Մխիթար Այրիվանե-

1) Դ. Ալիշան, Հուլիսի հայրենաց հայոց, հատոր Բ., Վենետիկ, 1870, էջ 279։

2) Մ. Աբեղյան, Վերածնությունը հայոց հին գրա-կանության մեջ (տես «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ Հայ-կական ֆիլիալի, 1941 թ., № 5—6, էջ 94)։

3) Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատ-մություն, հատ. 2-րդ, Երևան, 1946 թ., էջ 53։

1) Պատմություն Հայոց, արարեալ Կիրակոսի վեր-գապետի Գանձակեցու, Թիֆլիս, 1909, էջ 104։

2) Համառոտ պատմություն Վրաց, Վենետիկ, 1904, էջ 122—123։

ցին: Այս պատմիչների տեղեկությունները, սակայն, շատ կցկտուր են և հնարավորություն չեն տալիս մեզ լրիվ պատկերացում ունենալ ոչ չեղանանների անձնավորության և ոչ էլ նրա գրական ու գիտական գործունեության մասին ամբողջությամբ առած: Նրա կենսագրության հետ կապված մի շարք կարևոր հարցեր մնում են դեռևս չպարզաբանված: Այսպես, մինչև այժմ վիճելի են չեղանանների ծննդավայրը, մահվան թվականը, Անիի հետ ունեցած կապը և այլն: Իրավացի է զանգառվում հանգուցյալ պրոֆ. Ա. Բեդյանը, թե «Այս համբավավոր գրողի կենսագրության համար, ցավոք, սակավ տեղեկություններ ունինք, և եղածներն էլ մասամբ դեռ չեն ստուգված»¹):

Ալիշանը իր «Մարկավազ Սուրհաստես» աշխատության մեջ այդ առթիվ գրում է. «Ցավալի է մեզի Մարկավազա վարուց և գործող մասամբ անծանոթ մնալը, ինչպես նաև իր վերջին տարիներում և մահվան կերպն և զարմանք է, որ Հայսմավուրաց մեջ չեմ հանդիպած անոր վարքին կամ հիշատակին, ինչպես որ իրմե ետքը եղող շատ վարդապետաց վարքն կան»²): Ալիշանն այնուհետև հույս է հայտնում, որ եզուցե դեռ իր ապրած կողմերում մնացյալ վանից և եկեղեցիաց Հայսմավուրաց մեջ գտվի այս փափագածին»³:

Ալիշանի հույսն այժմ իրագործված է. ՀՍՍՌ Մատենադարանում հայտնի է դարձել նրա ակնարկած չեղանանների վարք-կենսագրականը: Բայց ուշադրության արժանի է, որ այդ վարքը ընդօրինակված է ոչ թե չեղանանների ապրած վայրերի գրչության դրպրոցների ձեռագրերում, ինչպես ենթադրել է Ալիշանը, այլ հեռավոր Սիսիանի շրջանի պատմական Անգեղակոթ գյուղում ընդօրինակված մի գրչագրում:

Չեղանանների այս վարքագրությունը ՀՍՍՌ Մատենադարանի ձեռագրերում մեզ հայտնի է դարձել 1939 թվականի աշնանը: Հետաքաշում պարզվեց, որ չեղանանների այս կենսագրության հետ ծանոթ է եղել նաև դոց. Ա. Մովսեսյանը, ՀՍՍՌ Մատենադարանի հիշատակարանների ժողովածուից, որը նրանից առանձին քաղվածքներ է արել իր մի հոդվածում: Այդ հոդվածը տեղավորված է Սրեանի Պետական Համալսարանի «Գիտական աշխատություններ»-ի 23-րդ հատորում՝ «Հայա-

գիր դպրոցի ծագումը և նրա հետագա վիճակը» վերնագրով:

Չեղանանների նշված վարքը — կենսագրականը ընդօրինակված է 1378 թվականին: Ընդօրինակող գրիչն է Մատթեոս երեցը, որը թողել է մի փոքրիկ հիշատակարան հետևյալ բովանդակությամբ. «Կատարեցաւ հրաշափառ սուրբ գիրքս այս... ձեռամբ նոյն վերայգրեալ Մատթեոս իրիցոյ, ի թիս հայոց Պիէ (1378), ի գեղաքաղաքս, որ Անկեղակոյտ կոչի...»⁴): Նույն էջի ներքին լուսանցքում տրված է հետևյալ փոքրիկ հիշատակագրությունը. «Սակաւիկ յիշատակիկ Մատթեոսի վոխտ փանաքի տրուպիկ գրչի»⁵): Չեղանանների կենսագրությունը վերնագրված է. «Հանդէս բանից վասն երանեալ առն աստուծոյ Սարկաազին կենաց, և մահուն և այլոց սրբոց հուպ յայն ժամանակս»:

Ձեռագիրը բովանդակությամբ «Հարանց վարք» է: Նա բաղկացած է երկու մասից. մինչև թերթ 369-ը — գրչի բուն ընդօրինակությունն է, իսկ հետո եղած մասը՝ նորոգված է և կազմված է 1655 թվին՝ Գրիգոր գրչի ու նրա աշակերտ Հովսեփի կողմից՝ Մելիք Շահնազարի պատվերով: Հիշատակագրության մեջ առված է. «Դարձեալ յիշեցիք ի Քրիստոս զմելիք Շահնազարն, զգովելի յիշխանն... որ ետ վերըստին նորոգել զսուրբ գիրքս... նորոգեցաւ սուրբ գիրքս ձեռամբ վարպետ տէր Գրիգորէ և Յովսափ անուն նորին անարժան աշակերտի» (թ. 583 ա):

Ձեռագրի նյութը թուղթ է: Գրված է երկսյուն գեղեցիկ բոլորագրով:

Դժվար է ճշտությամբ որոշել նախագահափարը գրչագրի, ինչպես նաև վարքը գրվելու ժամանակը: Սակայն, կենսագրի որոշ ակնարկներից երևում է, որ նա 12-րդ դարի կեսերում ապրած մարդ է: Համեմատյալ դեպս, նա տեսել է չեղանանների աշակերտներին և նրա ժամանակակից մարդկանց ու նրանցից է վերցրել իր կազմած վարքագրության մեջ բերած տեղեկությունները: Այս առթիվ մենք կարող ենք մատնացույց անել հետևյալ երկու փաստերը:

ա) Կենսագիրը Բարսեղի անունը հետ կապված մանրամասն պատմելուց հետո, մանրամասն առելի համաստիսապատում դարձնելու նպատակով, ավելացնում է. «Զայս ինչ գրով խնդրեալ իմ և նորա՝ (քնագրում) նոցա — Ա. Ա.» ի բերանով:

1) Մ. Բեդյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2-րդ, էջ 43:

2) Ղ. Ալիշան, Հուլիս, Բ. հատոր, էջ 306:

3) Նույնը, էջ 306:

4) ՀՍՍՌ Մատեն. Ձեռ. № 2680, Բ. 369ր:

5) Նույնը, Բ. 369ր:

առնն, որ ակամատես էր և սպասաւոր, ստուգեալ գրեցին առ մեզ, զոր գրեցաքս¹⁾։

բ) Կենսագիրը երկրորդ անգամ կամենալով ցույց տալ իր օգտուած աղբյուրների հավաստիությունը, նորից մատնացույց է արել իր սկզբնաղբյուրը հանդիսացող Հովհաննեսի աշակերտը և նշել, որ՝ «Այս հատարի պատմությունն պատմեցաւ յաշակերտէ նորին կրամաւորի սքանչելաշուն յերիցս երանեալ վարդապետէն Յովհաննես Սարկաւազին, զոր գրեցաքս²⁾»։

Հովհաննեսը, ինչպես հետո կտեսնենք, մահացել է 1129 թվին. եթե կենսագիրը տեսել է Հովհաննեսի աշակերտին ու ժամանակակիցներին և նրանցից վերցրել իր տեղեկությունները, ապա այդ եղած պիտի լինի նրա մահվանից ոչ ուշ քան 10—20 տարի, հետևապես, Հովհաննեսի կենսագրությունը գրված պիտի լինի, մոտավորապես, 12-րդ դարի կեսերին։

Հովհաննեսի անվան հետ կապված առաջին վիճելի հարցը, այդ նրա ծննդավայրի հարցն է։ Հովհաննեսի մասին մինչև վերջերս եղած գրեթե բոլոր ուսումնասիրությունների մեջ, նրա ծննդավայրն է համարվել՝ Փառիստի շրջանը (Արցախում)։ Հայագետների կոալաններն այս հարցում, իհարկե, պատմագրերի հաղորդած տեղեկություններն են։ Այսպես, Վարդան Արեւելոյի վկայում է. «Եին և վարդապետք յայնմ ժամանակի Յովհաննէս, որ և Սարկաւազ ի գաւառէն Փառիստոյն³⁾»։ Մի փոքր այլ է Կիրակոս Գանձակեցու տեղեկությունը, որը Հովհաննեսին համարում է իրեն հայրենակից. «Սոքա երեքկեանս (Դաւիթ վարդ. Ալաւկայ որդի, Գրիգոր վարդ. Թոքակերի որդի և Հովհաննես) էին յաշխարհէն Գանձակայ, ուստի և նա⁴⁾»։ 2. Ոսկյանը Հովհաննեսի անձնավորության և գրական աշխատությունների մասին գրած իր ուսումնասիրության ծանոթության մեջ աշխատել է հարթել պատմագրերի մոտ նկատվող այս հակասությունը՝ Փառիստը համարելով Գանձակի մի գավառը. «Աշխարհէն Գանձակիդ այս է՝ Արցախ, որուն մեկ գավառն ալ է Փառիստը⁵⁾»։ Պրոֆ. Մ. Արեւելոյն իր «Հայոց հին գրականության պատմություն» մեջ չի համար

ծարնվում Հ. Ոսկյանի անդակացության հետ և գտնում է, որ Գանձակեցին՝ վերև հիշված երեք վարդապետներին Գանձակեցի համարելու խնդրում, առաջնորդել է տեղական փառասիրությունը⁶⁾։ Իրականության մեջ, Փառիստը Գանձակի գավառներից մեկն էր, այս մասին քիչ հետո։

Հովհաննեսի կենսագրականը մեզ օգնում է ճշտել Հովհաննեսի կապը Անիի հետ։ Հովհաննեսի կենսագիրը խոսելով Հովհաննեսի Հաղբատի վանքում կրթություն ստանալու և տարբեր դիտությունների մեջ խորանալու մասին, նշում է, որ նա իր այդ դիտելիքները, որոնք ամփամում է բաղմբանգ գույնի, հոտի և համի ծաղիկներ, իմաստուն մեղվի նման բերում է իր քաղաքը, սննդյան վայրը — Անին. «Որ իբրև դիմաստուն մեղու, — կարդում ենք Հովհաննեսի վարքագրության մեջ, — բարձեալ յանդամ մտաց զծաղիկս յերանգոց զունոց, և հոտոց, և համոց, քերէր ի քաղաք իւր և տեղի սննդեան՝ ի բաղամայրս Անի (ընդգծումը մերն է — Ա. Ա.) և լի առնէր զստունս ի փարթամութեանէ անտի...»⁷⁾։

Ինչպես տեսնում ենք, կենսագիրը Անին հիշում է որպես «քաղաք իւր» և «տեղի սննդեան»՝ ցանկանալով ակնարկել Հովհաննեսի երկար ժամանակ Անիում գտնվելու փաստը։

Փառիստից էր, ինչպես երևում է, Հովհաննեսի կենսագրականից, նրա քեռին Ուռնացի մականունն ունեցող վարդապետը, որի մոտ Հովհաննեսն ստացել է իր կրթությունը. «Մենալ և դաստիարակեալ (Յովհաննէսն) առ սրբասնունդ քեռոյն իւրոյ (Ուռնացի վարդապետին) ի վանսն Հաղբատ՝ գաւառաւ ի Փառիստոյն⁸⁾», — կարդում ենք վարքագրության մեջ։ (Հովհաննեսի քեռու անունը մեզ հայտնի չէ)։

Հովհաննեսի վարքագրության մեջ նրա քեռու մասին եղած այս տեղեկությունը մեզ հնարավորություն է տալիս բացատրել պատմագրերի մոտ առ երևույթ նկատվող որոշ հակասություններ։ Ըստ կենսագրի, Հովհաննեսի քեռին, ինչպես, իհարկե, և մայրը, Փառիստից են։ Սխալ չէ նաև Գանձակեցու տեղեկությունը՝ որ Հովհաննեսը Գանձակեցի էր, որովհետև Փառիստը 12-րդ դարում Արցախի գավառներից մեկն էր, ուստի և Կի-

1) ՀՄՍՈ Մատեն. Զեռ. № 2680, Թ. 581ա։

2) Նույնը, Թ. 581ա։

3) Մեծին Վարդանայ պատմության տիեզերական, Մոսկվա, 1861 թ., էջ 159։

4) Սամուէլի քահանայի Անեցույ հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893 թ., էջ 128։

5) Հ. Ոսկյան, Հովհ. Սարկավազի կյանքը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1926, էջ 29)։

1) Մ. Արեւելոյն, Հայոց հին գրակ. պատմություն, էջ 533։

2) ՀՄՍՈ Մատեն. Զեռ. № 2680, Թ. 579բ։

3) Նույնը, Թ. 579ա։

րակոս Գանձակեցիին իրավունք ունենր Հովհաննեսին համարելու իրեն համշխրակ: Փառիսոսը, ինչպես պարզված է, Շիրակունտու «Աշխարհացոյց»-ում հիշված Քուստի Փառնեսն է և գտնվել է ներկայիս Կարենքյանդ կոշվող վայրում:

Իդնայ որոշ աշխատությունների վերնագրում, Հովհաննեսը հիշված է նաև «Հաղթատեցի» մականունով: Այս պիտի բացատրել այն պատճառով, որ Հովհաննեսը իր կրթությունը ստացել է Հաղթատում, երկար աշխատել է և իր կյանքի վերջին շրջանում էլ միաբանել այնտեղ, ուստի և, ընտանիքն, որ հետագա մատենագրերը Հովհաննեսի անունը պիտի կապեն Հաղթատի հետ: Հովհաննեսի Հաղթատի հետ կապված լինելու փաստը նշում է նաև կենսագիրը: Նա խոսելով Հովհաննեսի մահվան մասին, գրում է: «Եւ այսպէս բարոք կացեալ ի ժիր մշակութեան, չոգաւ առնուլ զվարձն ի յաւերժական ժառանգութեան: Եւ եղաւ ի հանգստարանի սրբոմ ի Հաղպատ, ուր սնաւ և վարժեցաւ...»¹⁾: Այստեղ «սնաւ» բառը վարժագիրը զործ է ածել «հոգեւոր սնունդ» իմաստով, նկատի ունենալով Հովհաննեսի Հաղթատում սովորելը:

Այսպիսով, ամենից հավանականն այն է, որ Հովհաննեսը Գանձակի Փառիսոս դպիսոն է: Հովհաննեսի «մարմնակաճ սննդան» վայրն է հանդիսացել Անին, «հոգեւոր սնունդան» վայրը՝ Հաղթատը:

Հովհաննեսի կենսագրության հետ կապված երկրորդ վիճելի խնդիրը — այդ նրա ծնողների հարցն է: Ումքն՝ ր ան եղել նրա ծնողները:

Հովհաննեսի ծնողների մասին մեզ տեղեկություն է տալիս Վարդան Արեւելցիին²⁾: Պրոֆ. Աբեղյանը հիմնվելով նրա տեղեկության վրա, աշխատել է պարզել այդ հարցը և մենք սովորող անք համարում կանգ առնել դրա վրա: Կատենք միայն, որ Հովհաննեսի նորահայտ վարժագրությունից ևս երևում է, որ նա ծնվել է քահանայի ընտանիքում. քահանա է եղել ոչ միայն նրա հայրը, այլև մոր հայրը: Կենսագիրն այդ մասին գրում է. «Սա (այսինքն Հովհաննեսը — Ա. Ա.) ի մանկական տիոց և ի խանձարոց, ըստ սրբոյն Սամուէլի, նուիրեալ աստուծոյ և կուսութեան՝ յարեմէ և յարգանդէ՝ քահանայից» (ընդգծումը մերն է — Ա. Ա.)³⁾: Կենսագրի այս տեղեկության մեջ՝ «յարենէ» պիտի հասկանալ հոր կողմից, իսկ «յար-

դանդէ»՝ մոր: Այնպես որ՝ Վարդանի «ի քահանայական ազգէ» արտահայտությունն կոնկրետ դեպքում տոհմական իմաստ չունի, այլ անմիջապես Հովհաննեսի ծնողներին է վերաբերում:

Հովհաննեսի կենսագրականում նրա ծնողյան տարեթվի մասին հիշատակություններ չեն պահել սկզբնաղբյուրները, բայց որոշ տվյալների հիման վրա, մոտավոր ճշտությամբ, հնարավոր է որոշել նրա ծննդյան ժամանակը:

Հովհաննեսը մահացել է 1129 թվին ծնր հասակում, ինչպես իրավացի նկատել է Չամչյանը՝ «հասեալ ի բարոք ծերութիւն»⁴⁾: Եթե մենք հաշվելու լինենք, որ Հովհաննեսը մահանալու ժամանակ 75—85 տարեկան էր, ապա նա ծնված պիտի լինի 1045—55 թվականներին, ինչպես հաշվել է և Ոսկյանը:

Կամ մի այլ հաշիվ. Հովհաննեսը հայոց տոմարի բարեփոխությունը, անվիճելի, կատարել է 1084 թվին: Այդ ժամանակ նա, անպայման, 30—40 տարեկան հասակ պիտի ունենար, որպեսզի այդպիսի մի պատասխանատու գործ հանձնարարեին նրան և ինքն էլ համարձակվի ձեռնարկել այն: Եթե 1084 թվականից հանելու լինենք նրա 30—40 տարեկանը, դարձյալ Հովհաննեսի ծնունդը ընկնում է 1045—55 թվականներին:

Այսպիսով, մոտավոր ճշտությամբ կարելի է ասել, որ Հովհաննեսը ծնված պիտի լինի 11-րդ դարի 40—50-ական թվերին:

Հովհաննեսը, ինչպես պարզվում է, զարգացած ծնողների է ունեցել, որոնք հողատու վերաբերմունք են ունեցել դեպի իրենց որդու դաստիարակությունը: Այս մասին վկայում է ինքը մի աշխատության մեջ. «Եւ նախնեաց բարեպաշտից և յիմաստուն ծնողաց բուսեալ, ձեռնալէմ գործեցի, որք սնուցին զիս օրինօք հոգւոյն կենաց՝ առաւել քան ըստ բնութեանն տածիւք խնամոյ առ մանկութեան, որովք յառաջին հասակին դաստիարակեալք յոյս տայի քաջութեանն»⁵⁾:

Այս հատվածն, առանց սկզբնաղբյուրը ցույց տալու, «գրվածքի մը մեջ» ցուցումով, առաջին անգամ մեջբերում է կատարել Ալիշանը: Նրանից օգտվել է Զարբհանալյանը, իսկ վերջինից՝ պրոֆ. Մ. Աբեղյանը: Վերցնելով այս մեջբերումը, պրոֆ. Մ. Աբեղյանն անհրաժեշտ է համարել տալ հետևյալ տողատակ ծանոթությունը. «Այս ցիտատը բերում է և Զարբհանալյանը «Հայկ. հին. դպր. պատմ.» մեջ, աղբյուրը ցույց տալով «ուրիշ տեղ մը» անորոշ բառերով ըստ հին վենե-

1) ՀՄՍՐ Մատեն. № 2830, ք. 581ա:

2) Վարդան, Պատմ. տեղեկական, էջ 159:

3) ՀՄՍՐ Մատեն. Զեռ. № 2830, ք. 579 ա:

4) Մ. Չամչյան, Պատմ. հայոց, Վենետիկ, 1786, Գ. հատ., էջ 41:

5) ՀՄՍՐ Մատեն, Զեռ. № 66, ք. 69ա:

տիկյան սովորության: Հետաքրքիր է իմանալ, թե Սարկավազ Վարդապետն իր որդրվածքի մեջ է գրել այն»¹):

ՀՍՍՌ Մատենադարանում եղած Հովհաննեսի աշխատությունների ընդօրինակությունները, բարեբախտաբար, պահել են այդ հատվածը և մեզ հաջողվեց գտնել այն: Այդ աշխատությունը Հովհաննեսի «Ամբաստանութիւն զանձնէ» վերնագիրը կրող աշխատությունն է, որը դեռ ևս չի հրատարակված: Նշված տեքստն ընդօրինակված է ՀՍՍՌ Մատենադարանի № 6 և 666 ձեռագրերում:

Հայագիտության մեջ մինչև այժմ հայտնի չէ Հովհաննեսի ուսուցիչը: Մեզ ծանոթ պատմիչները լուրս են այդ մասին: Իրավացի է Ոսկանը, երբ գրում է. «Ո՞վ է կամ որո՞նք են Հովհաննես ուսուցիչները: Պատմությունը պատասխան չի տալ»²): Հովհաննեսի կենսագրության մեջ պահվել է փոքրիկ տեղեկություն նրա ուսուցչի մասին: Հովհաննեսի ուսուցիչն է հանդիսադել, ինչպես սակ ենք վերևում, իր քեռին, Ուռնացի մականուն ունեցող վարդապետը, որը գտնվել է Հաղբատում՝ և, հայրանական է, այդ միաբանության անդամ է եղել:

Հովհաննեսի կենսագրությունից երևում է, որ նա սկզբում ցանկացել է մասնագիտանալ երաժշտության մեջ, իսկ հետո, երբ դրսևորվել են իր արտակարգ ընդունակությունները, նրա վրա սկսել են հատուկ ուշադրություն դարձնել: «(Մարկավազն) յառաջագոյն առաւ ի վարժս երաժշտական հոգևոր ուսմանց,— գրում է վարդապետը,— և ապա յերևման մեծին ի նմա ծածկելոյ զանձին, աւանդեցաւ և յանձնարարաւ ի քեռոյն իւրմէ Ուռնացի վարդապետին»³):

Աշակերտական շրջանից սկսած, ըստ վարդապետի տեղեկության, Հովհաննեսն սկսում է փայլել իր արտակարգ բնորոշականություններով և որքան տարիքավորվում, նա ավելի է սկսում աչքի բնկնել իր ընկերների մեջ: Վարդապետն այդ մասին գրում է. «Եւ ի տղայական տիոց անտի եցոյց զանհաւասարութիւն առ նմանիս իւր և յամենայն փոփոխման հասակաց՝ զբարազանդեալ գտաւ առ հասակակիցսն յառաջատուիքսմբ աստեղերակաւն»⁴):

Վարդապետի պատմելով, Հովհաննեսը մանկուց հրաժարվել է իր հասակին հատուկ

խաղերից և զվարճանքից, առանձնացել և ամբողջապես նվիրվել գրական ուսումնասիրությանը. «Ամենայնի, որ վայրաքաղ և երկրի է,— գրում է վարդապետը,— բարեաւ մնալ ասացեալ՝ ողջախոհ իմն մոլորեցամբ մոլեալ: Քաղցրացան ի քիմս նորա և համեղացան՝ իմաստութեանն խոկումն... խոխոմս ըբանց միայնացեալ աւուրս յոլովս ի մանուկ հասակին կարդայր և ուսանէր»¹): Կենսագրի այս տեղեկությունը, անկասկած, բարոյախոսական նպատակով կազմված տեղեկություն է, սակայն նա ապացուցում է Հովհաննեսի մեծ ընդունակությունը և աշխատասիրությունը:

Հաղբատն իր ժամանակին հայ գրչության զարգացած դպրոցներից մեկն էր հանդիսանում. արևոդ կային զգիտուն ուսուցիչներ, ահա նրանց ձեռքի տակ է, ու նրանց շրջապատում, որ իր դաստիարակություն է ստացել Հովհաննեսը: Վարդապետը նշում է, որ Հովհաննեսը «Մակաւ սակաւ յառաջ մատուցեալ նստէր առ ոտս վարդապետաց, առնոյր ի նոցանէ զմեկնութիւնս և զառակս խորինս»²):

Հովհաննեսի աշխատասիրությունը ցույց տալու համար նրա կենսագիրը բերում է այլի հանրածանոթ միջադեպը, որի մասին հիշատակություն ունի նաև Կիրակոս Գանձակեցին: «Մատենադարանում աշխատանքը վերջացնելուց հետո, Հովհաննեսի ընկերները դուրս են գալիս այնտեղից և կարծելով թե Հովհաննեսը ևս աշխատանքը վերջացրել և գնացել է, փակում են դուռը: Օրեր հետո երբ գալիս են մատենադարան և բաց անում դուռը, Հովհաննեսին դռնում են այնտեղ պարապելիս: Երբ նրան հարցնում են՝ Ո՞րպէ՞ս պարապեցար առանց կերակրոյ և ըմպելոյ», Հովհաննեսը ցույց տալով իր կարգացած գրքերը պատասխանում է. «Այդ է իմ կերակուր և ըմպելի, զոր կերայ և արբի զաւուրձ զայսոսիկ»³): Հովհաննեսի կենսագիրն այդ դեպքը նկարագրում է հետևյալ ձևով. «Եւ առ յոյժ սիրոյ և ըղձից, զաւուրս ութ արգել զանձն ի զբաւսանս զանազան երանգոց և համադամ կերակրոց, որ անդ զանձեալ էին հոգևոր կերակրոց խորտիկք»⁴):

Ըստ երևույթին, Հովհաննեսի այլի մեջ

1) Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, էջ 44:

2) «Հանդէս ամսօրեայ», 1925 թ. հունվար—փետրվար, էջ 30:

3) ՀՍՍՌ Մատեն. Ձեռ. № 2680, Բ. 579 ա:

4) Նույնը, Բ. 579 ա:

1) Նույնը, Բ. 579 ա:

2) ՀՍՍՌ Մատեն. Ձեռ. № 2680, Բ. 579 ա:

3) Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, էջ 107:

4) ՀՍՍՌ Մատեն. Ձեռ. № 2680, Բ. 579 ա:

փակվելու այս միջադեպը լայն տարածում է գտել իր ժամանակին և որպես աշխատասիրությունը խրախուսելու դաստիարակիչ օրինակ օգտագործվել:

Նրկարատե ուսման վրա դրած իր քրթունաջան աշխատանքի մասին Հովհաննեսը պարզ արևարկում է «Սարեակ»-ի մեջ:

«Ուսայ ես դեգերմամբ ևս ի բազմաց
ամաց հետէ.

Զի տըքնեցայ դօր ամենայն եւ ըզգիշեցն
բովանդակ.

Ան իմաստիս ցանգութեամբ, նա և
սիրովն որ առ հանճար...

Յանապատի անտ դամ նըստիմ զի
օգտեցայց հանդարտութեամբ.

Ասացից և իմացայց զի մի եղէց
ընդ վայրատանց.

Վշխատեցայց անշահաբար ունայնատուր
իմաստութեամբ»¹):

Ալիշանի կայծերով, որովհետև Հովհաննեսը փոքր տարիքից աստվածաբանության աստիճան է ստացել և երկար մնացել այդ աստիճանում՝ քահանայի համար հասուն տարիք չունենալու հետևանքով, այդ պատճառով էլ «Սարեակ»-ը կոչումը նրա համար դարձել է մականուն:

Որ «Սարեակ»-ը կոչումը, իրոք, Հովհաննեսի համար ոչ թե աստիճան է հանդիսացել, այլ մականուն, այդ երևում է և նրա կենսագրականի հետևյալ տողից. «Վարդապետն Հովհաննէս և անուն բարդ՝ Սարեակ»²: Կենսագիրն այստեղ ճշգրտ անունը ասելով, անկասկած, նկատի ունի մականունը: Ի դեպ, Հովհաննեսի աշխատություններից մի քանիսը ուղղակի վերնագրված են՝ «Յովհաննիս սրբոյ վարդապետի, (զոր) մականուն Սարեակ» կոչի», որը դարձյալ հաստատում է Ալիշանի վարկածը:

«Սարեակ»-ը մականունից բացի, ինչպես ասել ենք վերևում, Հովհաննեսն ունեցել է նաև «Սուրենատոս», «Պետիկոս» և «Ժմաստատեո» մականունները: «Սուրենատոս» — հունական օփստիզ է, իհարկե լավ իմաստով, «Պետիկոս»-ը հունական ποικιλιαδ է՝ բանաստեղծ նշանակությամբ, իսկ «Ժմաստատեո»-ը՝ հնում փիլիսոփա իմաստն է ունեցել:

Հովհաննեսը Հաղբատում կրթությունն ավարտելուց հետո, եկել է Անի և այնտեղ դպրոց հիմնել, որը, ինչպես երևում է, շատ խոշոր դեր է խաղացել միջնադարյան Հայաստանում: Ըստ Խոսրոաբի վկայություն,

Անիից Հովհաննեսի հոշակը տարածվել է շատ հեռուները: Նրա մոտ եկել են սովորելու մոտիկ և հեռավոր վայրերից բազմաթիվ աշակերտներ: Վարդապիրը խոսելով Հովհաննեսի անձնավորության մասին, թե նա պարկեշտազնաց էր, քաղցրահայաց, համեղախոս և այլն, նշում է, որ Հովհաննեսի մոտ սովորելու էին գալիս աշակերտների մեծ խմբեր. «(է)ր և (Յովհաննէս Սարեակ) բարեբարոյ, քաղցրահայնաց եւ զուարթատեսիլ, պարկեշտազնաց եւ համեղախաւ, առ մեղուցեալս զըթած և առ ծանրաբեռինս իմաստուն բոիշկ: Այնչափ համբաւի ի բարիս, մինչ զի դոռթ տուեալ ի բացագոյն սահմանաց՝ առնուլ սպեղանիս ըստ իւրաքանչիւր խըղիայթեալ վիրիս»³: Վարդապիրը պատկերավոր ձևով պատմում է. «Այլ և որք իմաստութեանն գանձու սլանառականք և տննչացօղք էին, եկեալ մակաղէին առ ոտս երջանիկ համեղաբան իմաստունց և ընդին ըստ շափոյ մեծութեան զքսակս մտաց»:

Հովհաննեսի Անիում դպրոց հիմնելու փաստը խիստ կարևոր փաստ է հայ մատենագրության պատմության մեջ, որովհետև ակադ. Ն. Յա. Մառի Անիում կատարած պեղումներից հետո, երբ Անիի պատկերը մոտավոր գծերով պարզ դարձավ, հայտնի դարձավ նրա զարգացման աստիճանը, բրնականորեն առաջացավ մի խոշոր առեղծված — ինչպե՞ս է որ Անին չի ստեղծել իր մատենագրությունը: Նկատվում էր ինչ-որ հակասություն Անիում հայտնաբերված նյութական հարուստ կուլտուրայի և Անիից մեղ հասած, համեմատաբար, աղքատ մատենագրության միջև: Կարելի էր լսել իրավացի տրտմաններ, որ Անին մեղ հազար ու մեկ եկեղեցի տվեց, բայց ոչ մի դպրոց: Նվ դարմանալի չէ, որ մանկավարժներից ոմանք խոսելով հայ մանկավարժության պատմության մասին, ամենևին կանգ չեն առել նույնիսկ Անիի դպրոցի վրա: Այսպես, օրինակ, պրոֆ. Գ. Սարաֆյանը 1930 թվին իր «Կրթության պատմությունը Հայաստանում» անդերին լեզվով գրած աշխատության մեջ ոչ մի խոսք չունի Անիի դպրոցի մասին⁴: Դրանում մանկավարժության պատմությամբ զբաղվողները մեղավոր

1) ՀՄՍՄ Մատեն. Ձեռագ. № 2680, Թ. 579 Բ.:

2) K. A. Sarafian, History of education in Armenia, Le Verne 1930. (Սովետական մանկավարժներից զոց. Ա. Մովսիսյանը ծանոթ է Անիի դպրոցի մասին եղած նյութերի հետ և խոսել է իր հոդվածներում):

1) «Բաղմուկ», 1947 թ., էջ 222—223:

չեն— մինչև այժմ այդ մասին փաստեր հայտնի չէին։

Այժմ արդեն լուծվում է առեղծվածը. պարզվում է, որ Անին ունեցել է մատենագրական, և զարգացած մատենագրական դպրոց։ Այդ դպրոցի հիմնադիրն է հանդիսացել Հովհաննես Սարկավազը։ Այդ մասին խոսք կլինի առաջիկայում։

Հովհաննեսն իր մոտ ընդունել է աշակերտներ և սիրահոժար պարապել նրանց հետ ամեն տեսակ խրթին և խորին համարվող առարկաներ։ Այդ մասին Հովհաննեսի կենսագիրը գրում է. «Եւ ծաղկաւէտեալ արձակեաց բողբոջս եւ բուռոյց բոյսս արդիւնաբար։ Շուրջ բակ բողբոջալ զմանկունս զիրեաւ խոնարհաբար եւ ախորժելի սիրով ուսուցանեք զխրթին եւ զխորին իրաւ¹⁾»։

Եվ գնալով Հովհաննեսի դպրոցի հռչակն ավելի է մեծացել։

Քն ինչ բարձրության վրա է գտնվել Հովհաննեսի դպրոցը, այդ կարելի է դատել այն առարկաներից, որոնք դասավանդվել են։ Ըստ Հովհաննեսի կենսագրի տեղեկության, նրա դպրոցում դասավանդվել են հետևյալ առարկաները. քերականություն (որին վարձագիրն անվանում է «բանալի գիտութեան, դաստիարակ վերածնութեան, աղբիւր տասնեակ առդանութեանց»), տոմար (որին անվանում է «գուռ և զակն ոգւոյ», որ «տեղեկակ առնէր տօնից կարգաւորաց»), Արիստոտելի փիլիսոփայությունը, Փիլոնի մաթեմատիկական բովանդակություն ունեցող գործերը՝ («զառակախաւ բանս Արիստոտելի, եւ զթուականալսի խտրոցս Փիլոնի՝ դարից եւ կոճատաց, եւ զառ ի նոցանէ զծնունդս, եւ ի ներքոյ տասնեակին զծնունդս եւթանց և զանկարութիւնս ի յատուկսն ստուգակարգս, յաճունս եւ յանաճականս»²⁾ և իմաստասիրական ու աստվածաբանական այլ առարկաներ։ Այս մասին մանրամասն խոսել է դոց. Ա. Մովսեսյանը իր վերև հիշված «Հայագիտ. դպրոցի ծագումը և նրա հետագա վիճակը»³⁾ վերնագիրը կրող աշխատության մեջ։

Վարձագիրը խոսելով Հովհաննեսի տարած մանկավարժական խոշոր աշխատանքի մասին, նրան համարում է մարզիչ, մաքրիչ և հալիչ. «Յայսոսիկ և ի սոցին ազգական իրաց կրթարանս մղէր, կրթէր զամանս իրաց՝ զքսակ մտաց մանկանց, մարզիչ, եւ

մաքրիչ, եւ հալիչ՝ լափն և վատխարին պատրաստելով»։

Հովհաննեսի աշակերտները ավարտելով դպրոցը, վերադարձել են տեղերը և հիմնել անփական դպրոցներ և ուսուցչից ստացած իմացությունը տվել իրենց աշակերտներին. «Ելին յարմատոյ և շտաւեղէ նորին,— գրում է Հովհաննեսի կենսագիրը,— բարունակք յոճնապտուղք՝ ուսուցիչք և լուսատրք ոգւով, աստեղք անմոլարք եւ ջահք լուսաթաղանթք, եւ լցին զտիեղյութա բանիւն կենաց եւ իմաստալից տրամախոհ ներհունական իմաստիւր...»⁴⁾։ Կենսագրի այս տեղեկությունից պարզ երևում է՝ թե ինչ խոշոր դեր է ունեցել Անիի դպրոցը միջնադարյան Հայաստանում։

Սակայն Հովհաննեսի դերը չի սահմանափակվել միայն մանկավարժական աշխատանքներով։ Նա իր հիմնած դպրոցում գրական—գիտական խոշոր աշխատանք է ծավալել։ Փոշինների տակից դուրս հանելով մեր նախնայաց հին մատենագրությունը, նա մեծ աշխատանք է կատարել նրանք մեկնելու ուղղությամբ։ Նա գրել է նաև ինքնուրույն նոր աշխատություններ։ Այդ աշխատանքը նկատի ունենալով է, որ վարձագիրը իրավունք է համարել իրեն ասելու, որ՝ «Յամենայն դէմս բանի և գործոյ, տեսութեան և յառաջբերութեան, գրելոյ և ընթեռնոյ, պատմադրութեան և վարդապետական վերլուծութեան, մարդաբանականին և առաքելականին, այնպէս կատարելագործն դուաւ (Հովհաննէսն), որպէս եւ աշ ոք ի մինն միայն համբաւեալ կամ ի գործս կամ յարդիւնս»⁵⁾։ Այժմ, երբ ծանոթանում ենք Հովհաննեսի մեղ հասած աշխատությունների հետ, մենք ևս համոզվում ենք, որ, իրոք, մեծ է եղել Հովհաննեսի դերը՝ հայ մատենագրության զարգացման մեջ։

Ըստ Հովհաննեսի վարձագրի, աշխարհում, արհամարհված գիտությունները, որոնք խավարամիտների տգիտության պատճառով ծածկված էին և աղավաղված, Հովհաննեսի ջանքերով և տաղանդով նորից փայլեցին ի ուրախություն տեսություն և ուսումն սիրող անձանց. «Եւ ամենայն նսեմացեալ եւ խամրացեալ գիտութիւնք, որ ի տգիտութենէ և ի ծուլացելոց եւ խաւարելոց մտաւք ծածկեալ աղաւաղեցան՝ որ ի նախնեացն, նորին աշխատանքան երկովք եւ արադութեամբ մտաց զարդարեցան եւ

1) ՉՍՍԻ Մատեն. № 2680, ք. 579ր։

2) Նույնը, № 2680, ք. 580 ա։

3) Տես, Նրեանի Պետ. համալսարանի «Գիտական աշխատություն», հատոր 13։

1) ՉՍՍԻ Մատեն. № 2680, ք. 579 ր։

2) Նույնը, ք. 579 ր։

ցնծացան անձինք տեսաւէր եւ լսասէր արանց¹⁾։

Հովհաննեսը որպէս հոգևորական հեռու կանգնած չի եղել նաև եկեղեցական գործունեությունից։ ՀՍՍՌ Մատենադարանում մեզ հայտնի դարձավ մի հիշատակարան, որից երևում է, որ Հովհաննեսն Անիի Կաթողիկէ եկեղեցու ծխական քահանան է հանդիսացել։ Հիշատակարանը գրել է Մարկոս գրիշը։ Նա Հովհաննեսին հիշում է իր ընդօրինակած նախազաղափար օրինակի կապակցությամբ։ «Եւ դժեցաւ սայ ձեռամբ իմ՝ յետին անարժան եւ մեղսապարտ Մարկոսի, եւ անարհեստ յիմաստութիւն եւ ի գիծ, եւ տկար մարմնով, այսինքն՝ մի ոտանի, որ հոգով երկու ոտս կաղամ անբժշկելի, որ ի հարկէ սորա եւ յաւժար կամաց իմոց՝ գրեցի փանաթ գրով՝ յընտիր և յազնիւ արինակէ, զոր Սարկաւագ Բաճաճայ, սպասաւոր սուրբ Կաթողիկէի Մեծի, որ յԱնի (ընդգծումը մերն է— Ա. Ա.), ի բազում արինակաց, ի ձեռն եւ այլոց գիտնականաց զաւգտակարսն առեալ հաւաքեաց ի մի գիր, եւ շարադրեաց իրով ձեռամբ, ի դիւրալուր մտաց եւ գիտութեան, զոր սըխալեալ թիւրեցին անհանճարութեամբ գործը...»²⁾։

Հովհաննեսը, ինչպես երևում է, գործուն մասնակցություն է ունեցել քաղկեդոնականության դեմ ծավալված վեճերում։ Գրիգոր Վկայասերի ժամանակ, ինչպես հայտնի է, հոռմեական եկեղեցին ամեն կերպ աշխատում էր իրեն ենթարկել հայ լուսավորչական համայնքները, իսկ հայկական եկեղեցին՝ դիմադրում էր նրան։ Ահա այդ ժամանակ Հովհաննեսը քաղկեդոնության դեմ հանդես է եկել պոլեմիկ աշխատություններով և կազմել հակաքաղկեդոնական ընույթ ունեցող աղբյուրների մի ժողովածու։

Կղեմես վարդապետը իր «Միաբանություն...» աշխատության մեջ, Վատիկանի արխիվից վերցնելով, տեղավորել է մի վավերագիր, որից երևում է, որ Հովհաննեսը 1080 թվին Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի կողմից պատվիրակ է ուղարկված եղել Գրիգոր 7-րդ պապի մոտ։ Նա պապին է տարել Գրիգոր կաթողիկոս Վկայասերի նամակը

ինչ-որ հերձվածողի մասին։ Հավանական է, որ Հովհաննեսը ունեցած լինի այլ հանձնարարություններ ևս, գուցե և քաղաքական բնույթի։ Պապը 1080 թվի հունիսի 24-ին գրել և Վկայասերին է ուղարկել նրա վերև նշված նամակի պատասխանը։ Նամակի վերջում պապը խնդրել է Վկայասերից, որպեսզի նա Հովհաննես քահանայի միջոցով պատասխանի իրեն։ «Եւ ապա վերստին անձն առնեմք եղբայրութեան քում և պատուիրեմք, զի ի ձեռն վերոյգրեալ քահանային (այսինքն Հովհաննէս քահանայի— Ա. Ա.) եւ կամ այլոյ պատշաճաւոր հրեշտակի՝ առաքեսցես առ մեզ նամակս»³⁾։

Ճիշտ է, եղել են այս նամակի նկատմամբ կասկածներ. այսպես օրինակ՝ Օրմանյանի կարծիքով, «նամակը հայոց կաթողիկոսին վերագրելու փաստ մը չկա»⁴⁾։ Եվ նա հավանական է համարել, որ նշված նամակը ուղղված լինի Սյուննադայի Գրիգոր եպիսկոպոսին։ Սակայն մեր ուսումնասիրությունները չհաստատեցին այդ կասկածանքը։

Կցկտուր են, դժբախտաբար, Հովհաննեսի ընտանիքի, աշակերտների, շրջապատող մոտիկ մարդկանց վերաբերող տեղեկությունները։ ՀՍՍՌ Մատենադարանի ձեռագրաց ժողովածուում հայտնի է Ստեփանոս քահանա անունով մի տոմարագիր, որը հիշված է որպես Հովհաննես քահանայի որդին։ Մեզ հասել է այդ Ստեփանոս քահանայի տոմարական մի աշխատությունը, որն ունի «Ստեփանոս երիցոյ տումարագիտի, որդոյ Յովհաննէսի Բաճաճայի առաջեալ յաղագս ընթացութեան արեգական Բաճաճի ուր ամաց, եւ շրջագայութեան լուսնին ինքնատաւերեալ ամաց, որ լինի միաբանութ ընդ ամենայն ամբ Եկր» վերնագիրը։ Նրկատի ունենալով, որ ժամանակագրական հաշվով այս Ստեփանոս երեցի ժամանակը համընկնում է Հովհաննեսի ժամանակի հետ, և ապա՝ Ստեփանոս երեցը տոմարագետ է ու հիշված է որպես Հովհաննես քահանայի որդի, ուստի և հավանական ենք համարում, որ այս Ստեփանոսը հենց մեր Հովհաննես Սարկավագի որդին լինի։

Կցկտուր են նաև Հովհաննեսի աշակերտների մասին եղած տեղեկությունները։ Նրա բազմաթիվ աշակերտներից մի քանիսի ա-

1) ՀՍՍՌ Մատեն. Ձեռ. № 2680, Թ. 579 ր։

2) ՀՍՍՌ Մատեն. Ձեռ. № 666 (769), Թ. 251ա։ Հովհաննես Սարկավագին չափոք է շփոթել, Ղ. Ալիշանի «Երիտասարդ հիշած Սարկավագի (Իշխանող Կաթողիկէին Անոյ) հետ վերջինիս հիշատակության թվականն է 1286 (տես «Երիտասարդ», էջ 96)։

1) Միաբանություն հայոց եկեղեցւոյն ընդ մեծի եւ սուրբ եկեղեցւոյն Հոռովայն Կղեմէս վարդապետէ. III հատ., Հոռմ, 1650, էջ 233։

2) Մ. Օրմանյան— Ազգապատում, I հատ., Կ. Պոլիս, 1912 թ., էջ 1305—1306։

նուններն են միայն մեզ հասել: Մատենադրական տեղեկությունների հիման վրա կարելի է հիշել Հովհաննեսի հետևյալ աշակերտներին:

ա) Երեմիա Աճառեկի.— Սրա մասին տեղեկություն է տալիս Վարդան Արենցին և Հովհաննեսի վարձագիրը¹⁾: Ըստ Հովհաննեսի վարձագրի տեղեկության, երեսուն տարի շտապեցի սեղանաւ հացիւ եւ բանջարով շատացեալ²⁾:

բ) Սամուել Բաճաճա Աճեցի.— Սա մեզ ծանոթ ժամանակագիրն է: Սամուելի Հովհաննեսի աշակերտ լինելու մասին գրում է Վարդանը. «Եւ ի նմանէ (այսինքն) Հովհաննեսից.— Ա. Ա.) աշակերտեալն... Սամուէլ երէց աշխարհի, որ գգազանսն յօրինեաց Քրոնիկոնին, Աճեցին³⁾»:

գ) Սարգիս.— Սրա Հովհաննեսի աշակերտ լինելու մասին տեղեկություն է պահպանում մի հիշատակարանում, որը մեջ է բերել Ալիշանը իր «Հայապատում» աշխատության մեջ: Հիշատակարանում ասված է. «Կատարեցաւ հոգեկորոգ տառս մեկնութեան սուրբ աւետարանին Յովհաննու, զոր կարգեալ եւ ուղղեալ բազում աշխատութեամբ մեծի իմաստնոյ Սարգիս կոչեցեալ, աշակերտ երիցս երանեալ սուրբ վարդապետի Սարկազ կոչեցեալ⁴⁾»:

դ) Խաչատուր Աճեցի.— Սրա անունը հիշատակում է Սամուել Աճեցին⁵⁾:

ե) Գրիգոր Աճեցի.— Տեղեկություն է տալիս նույն Սամուել Աճեցին:

զ) Հովհաննես Աճեցի.— Դարձյալ Սամուելն է հիշում նրան:

Ոսկյանի կարծիքով Հովհաննեսի աշակերտն է հանդիսացել նաև Ստեփանոս Զոգմա մականուն ունեցող քահանայ: Բայց այս փաստը պատմական ավանդանքով դեռ չի հաստատվում:

Մեր մատենագրերի մոտ պահվել է նաև Հովհաննեսի երկու ընկերների անունը— Գրիգոր Թոքակերի որդի կոչվածը և Դավիթ Ալավկա որդին (Դատաստանագրքի հեղինակը): Գանձակեցին հետևյալ մանրավանդ է բերում իր աշխատության մեջ. «Ի՛նչպե՛ս եղև, զի յաւուր միում, նստէին երե-

քեան արքս սքանչելի, եկն անդ ոմն շինական այր մի եւ ասէ ցնոսա՝ Երանի որ զիտէ՝ ո՞ր իմաստադոյն իցէ: Զայս իբրեւ ծաղրական ասաց: Պատասխանի ետ Թոքակերի որդին եւ ասէ. Ես ասեմ քեզ. միշտեւ էաք ի մերում աշխարհին, ես կտրող էի եւ կարող, իսկ Սարկազա կարել միայն գիտէր, իսկ այժմ սա կտրէ, եւ կարէ, եւ բազում նկարս յաւելու ի վերայ: Զայս առակարար վասն իմաստութեան նորա ասաց¹⁾:

Հիմք կա ենթադրելու, որ Հովհաննեսն իր ծերության հասկում քաշվել է Հաղբատի վանքը և այնտեղ անցկացրել իր վերջին օրերը: Նա այնտեղ էլ մահացել է ու թաղվել: Ուշադրության արժանի է, որ Հովհաննեսի կրոնական րովանդակություն ղենցող աշխատությունների մեծ մասի վերնագրերում նա հիշված է լինում ոչ թե սովորական «Յովհաննէս քահանայ», այլ «Յովհաննէս Սարկազ վարդապետ» ձևով: Մեզ թվում է, որ իր կրոնական գործերի մեծ մասը նա գրել է ծերության շրջանում, Հաղբատում միաբանած ժամանակ:

Հայագետներից ոմանք (Ալիշան, Օրմանյան, պրոֆ. Ե. Տեր-Մինասյան և ուրիշները) ենթադրել են, որ Հովհաննեսը Հաղբատի վանքի վանահայր է եղել: Այսպես, պրոֆ. Ե. Տ.-Մինասյանը այդ մասին գրում է. «... Մեծ արժանավորությունների շնորհիվ Հովհաննէս Սարկավազ վարդապետը արժանի եղավ նաև Հաղբատի սուրբ ուխտի առաջնորդ լինելու, բայց թէ ինչքան ժամանակ կառավարեց նա, հայտնի չէ²⁾»: Սակայն Հովհաննեսի Հաղբատի վանահայր լինելու փաստը սկզբնաղբյուրներով չի ճշտվում: Մենք չունենք ուղղակի կամ միջանկյալ ոչ մի հիշատակություն՝ նրա վանահայր լինելու մասին:

Ի միջի այլոց, մեր հեղինակ Հովհաննես Սարկավազին չպիտի շփոթել համանուն այլ Հովհաննեսի կամ «Սարկավազ» մականուն ունեցող անձնավորության հետ, որովհետև այդ անունով և մականունով մի շարք հեղինակներ են հայտնի հայ մատենագրության մեջ: Այսպես, մեզ հայտնի է Հովհաննես քահանա՝ Եվդոկիայում, որը 1171 թվին գրել է մի ավետարան³⁾, Հովհաննես քահանա՝ Հարիճա վանքում, որը գրել է մի ձեռագիր 1219 թվին⁴⁾, Սարկավազ մականունով մեկը, որը Թամարա թագուհու ժամանակ

1) Վարդանի տպագիր տեքստերը սխալաշատ օրինակ լինելու պատճառով օգտվել ենք ՀՍՍՌ Մատեն. № 3074 ձեռագրից (թ. 66 ա):

2) ՀՍՍՌ Մատեն. Ձեռ. № 2680, Թ. 580 ա:

3) Նույնը, Ձեռ. № 3070, Թ. 66 ա:

4) Դ. Ալիշան, Հայապատում ի գրոց պատմագրաց, էջ 128:

5) Սամուէլի քահանայի Աճեցույ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 12:

1) ՀՍՍՌ Մատեն. Ձեռ. № 151, Թ. 203:

2) Տես «Արարատ», 1901 թ., էջ 343:

3) ՀՍՍՌ Մատեն. Ձեռ. № 313, Թ. 210 ա, 266 բ:

4) Նույնը, Ձեռ. № 1382:

Գեորգի վանքի վանահայր է հանդիսացել, (Գանձակեցիին նրա մասին հիշատակում է՝ «Եւ էր առաջնորդ վանիցն վարդապետն, որ Սարկաւազ անուանիւր»), Հովհաննես Սարկավազ անունով մեկը, որը թաղված է Մշո Ս. Կարապետի վանքում¹⁾, Հովհաննես Սարկավազ անունով մի գրիչ ավելի ուշ շրջանում, որի մի շարք ձեռագրերն են մեզ հասել²⁾։ Ակադ. Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ից երևում է, որ 13-րդ դարում եղել են Հովհաննես Սարկավազ անունով այլ անձինք ևս — Հովհաննես Սարկավազ Շիրինի որդի (էջ 592) և Հովհաննես Սարկավազ անունով մեկը, որ 1276—1286 թվերին մի մաշտոցի գրիչ է (էջ 597)։

Հովհաննեսի մահվան թվականը վիճելի է։ Նրա տապանաքարը, որը գտնվում է Հաղբատում, թվական չունի, իսկ պատմիչների հրապարակված տեքստերում Հովհաննեսի մասին եղած տեղեկությունները հակասական են։ Հայազեանների մեծ մասը (Ալիշանը, Ոսկյանը, պրոֆ. Մ. Արեղյանը և ուրիշներ), հիմնվելով Կիրակոս Գանձակեցու և Սամուել Անեցու հաղորդած տեղեկությունների վրա, Հովհաննեսի մահվան թվականն են համարում 1129 թվականը։ Բանասեր Կ. Կոստանյանը, Դավիթ Ալավկա որդու ժամանակի կապակցությամբ, խոսելով Հովհաննեսի մահվան մասին, նրա մահվան թվականն է համարում 1139-ը³⁾։ Բանասեր Կ. Կոստանյանից օգտվել և նրա տված թվականը կրկնել է պրոֆ. Խ. Սամվելյանը⁴⁾։

Պրոֆ. Մ. Արեղյանը այդ խնդրին անդրադարձել է իր «Բրականություն պատմության» մեջ և մանրամասն քննելով Կ. Կոստանյանի կողմաները, մերժել է այն։ Նա համոզեցուցիչ փաստերով ապացուցել է, որ Հովհաննեսի մահը տեղի է ունեցել ոչ թե 1139 թվին, այլ 1129-ին⁵⁾։

Մենք չենք ցանկանում այստեղ մեջ բերել պրոֆ. Մ. Արեղյանի կողմաները։ Սակայն լրացման կարգով ցանկանում ենք մատնացույց անել մի քանի նոր փաստեր, որոնք նույնպես հաստատում են պրոֆ. Մ. Արեղյանի եզրակացությունը՝ Հովհաննեսի մահվան ժամանակի խնդրում։

Առաջին փաստը — այդ Հովհաննեսի կենսագրի տեղեկությունն է, որ նրա մահվան թվական է նշանակել 1129-ը. «Յետ վարսն ոյ զքաղաքականութիւն երկնաքաղաքական վարուց», — գրում է կենսագիրը, — պատկերն ճշմարտութեան և քանոնն աւրինաւոր կարգաց երիցս երջանիկ վարդապետն Յովհաննէս, եւ անունն բարդ՝ Սարկաւազն, եհաս ի կէտ եւ յաւարտ բարութ կենաց ճանապարհին ի ՇՀԸ (1129) թուականին եւ եղաւ պատուով ի քնարանի հանգստեան ընդ ամենայն սուրբս»¹⁾։ Նույնը կրկնված է կենսագրության վերջում, սակայն ընդօրինակող գրիչն անուշադրությամբ ՇՀԸ թվականից բաց է թողել Հ տառը (70) և գրել է ՇԸ, իսկ նոր գրչությամբ լուսանցքում ուղղվել է՝ ՇՀԸ ձևով։ Այսպիսով, Հովհաննեսի կենսագիրը նրա մահվան թվականն է համարում 1129-ը։

Երկրորդ փաստը — այդ Հովհաննեսի մահվան մասին վարդան Արեւելցու տված թվականի ճշտումն է։ Հովհաննեսի մահվան թվականը 1139 համարող հայագետների գլխավոր կողմանք, ինչպես հայտնի է, վարդան Արեւելցու տեղեկությունն է, որը Մոսկվայի հրատարակության մեջ նշանակված է ՇԸԸ, այսինքն՝ 1139։ Այս խնդիրը պարզելու համար մենք դիմեցինք ձեռագրերին, վարդան Արեւելցու ՀՍՍՄ Մատենադարանում եղած ձեռագրերի ուսումնասիրությունը մեզ բերեց այն եզրակացություն, որ տպագիր տեքստում ՇԸԸ-ն գրչական սխալի արդյունք է և պիտի լինի ՇՀԸ ձևով։ Ծիշտ է, այդ թվականը վարդանի տարբեր ձեռագրերում տարբեր ձևով են պատահում — որոշ ձեռագրերում ՇԿԸ ձևով է (1119), որոշ ձեռագրերում ՇԸԸ ձևով, սակայն հնագույն և լավագույն գրչությամբ ձեռագիրը (1129) ՇՀԸ է։ Պետք է ասել, որ վարդանի շարադրած փաստերի պատմական հաջորդականությունից ևս պարզ երևում է, որ ճիշտը, ինչպես ցույց է տվել պրոֆ. Արեղյանը, ՇՀԸ է։

Սարկավազի մահվան մասին ՇՀԸ թվական է տալիս նաև Օրբելյանն իր ժամանակագրության մեջ։ Նա գրում է. «ՇՀԸ փոխ-

1) Ուղեորություն ի Փոքր Ասիա, գրեցին Ալպեր Տըվըլէ և Գրիգոր (Թարգմ. Հ. Տաշյանի, Վիեննա, 1892 թ., էջ 54)։

2) ՀՍՍՄ Մատեն. № 1221, 1228 ձեռագրերը և այլն։

3) Կ. Կոստանյան, Դավիթ Ալավկա որդի («Ազգագրական հանդես», ԺԲ դրոշ, 1906, էջ 105)։

4) Խ. Սամվելյան, Հին իրավունքի պատմ., Երևան, 1939, էջ 74։

5) Մ. Արեղյան, Հայոց հին գրական. պատմ., էջ 534։

1) ՀՍՍՄ Մատեն. Ձեռ. № 2680, Թ. 579 ա։

ցաւ ի Քրիստոս մեծ վարդապետն Սարկաւազ ի Հաղբատա¹⁾),

Հովհաննեսի ժամանակի հարցում պատմական կոպիտ անախրոնիզմ է թույլ տվել Սոմալյանը, որի վրա կանգ է առել Ոսկյանը։ Սոմալյանի կարծիքով 1157 թվին, Գրիգոր Պահլավունու ժամանակ է ծաղկել Հովհաննես Սարկավազի դպրոցը²⁾, մինչդեռ Հովհաննեսը 1157 թվից 28 տարի առաջ մահացել էր արդեն և այդ ժամանակ նրա դպրոցի ծաղկման մասին խոսք լինել չի կարող։

Միանգամայն բավարար լուծում է ստանում նաև այն առեղծվածը, որը կապված է Սամուել Անեցու մոտ Սարկավազ անունը Սարգիս ձևով հիշվելուն։ Սամուել Անեցու ժամանակագրության ամենահնագույն ընդօրինակության մեջ ՇՀԸ թվականի առջև, ժամանակագրական սյունակի ձախ կողմում, կարելի է պարզ կարդալ ոչ թե Սարգիս, այլ Սարկավազ։ «Փոխեցաւ ի Քրիստոս մահուամբ մեծ վարդապետն Սարկավազն ի Հաղբատա»։ Աջ կողմում, ՇԶ թվականի առջև, գրված է. «ենջեաց յայսմ ամի լուսատորիչ սուրբ վարդապետն Դավիթ Ալաւկայ որդին»³⁾։ Հովհաննեսի մասին Սամուել Անեցու ժամանակագրության էջ 128-ում բերված հատվածը կրկնություն է առաջին տեղեկության, միայն հրատարակիչ Ա. Տեր-Միքայելյանը շփոթելով վերցրել է այն այլ ձևազարդից։

Այստեղ զարմանալի չէ, որ ուղղահայաց իջնող երկու թվականների շարքում Անեցու մոտ մեր ներկա թվականության տարբերությունը հայկական թվականից հաշված է ոչ 551, այլ 553։ Այս մասին խոսք կլինի ուրիշ առթիվ։ Այժմ միայն կասենք, որ Անեցու մոտ հայկական թվականի հավելումը միշտ 553 է։

Անեցու ժամանակագրության տպագիր

տեքստի Հովհաննեսի մասին եղած առաջին հատվածում արժեքավոր է նրա աշակերտներին վերաբերող մի տեղեկություն, որը, հավանական է, վերցրված է ավելի հին աղբյուրից, շատ հավանական է, Հովհաննեսի վարք— կենսագրականի ընդարձակ տեքստից, որը մեզ չի հասել։

Հովհաննեսը, ինչպես ասացինք, մահացել է Հաղբատում։ Նրան, ըստ Գանձակեցու տեղեկության, թաղել են տաճարի արևելյան կողմը, փոքր եկեղեցու դիմաց։ Հետագայում նրա գերեզմանի վրա Համազասպ եպիսկոպոսը զանգակատուն է կառուցել։ «Եւ թաղեցին զնա (այսինքն Հովհաննեսին— Ա. Ա.),— գրում է Գանձակեցին,— յարևելից կուէ եկեղեցւոյն մեծի, առ դուրս փոքրագոյն եկեղեցւոյն, զոր յետոյ քակեաց եպիսկոպոսն Համազասպ և շինեաց հրաշալի շինուած, ուր զգանգակսն կախէին»⁴⁾։

Հովհաննեսի տապանաքարը մինչև այժմ մնում է Հաղբատում։ Նրա վրա լակոնական ոճով փորագրված է հետևյալ երկու տողը.

«Արձանս այս սեմական

Ի Սոփեստոսի Սարկավազին»⁵⁾։

Հայ գիտնականի անշուք տապանաքարը հարազատ պատկերն է նրա համեստ կյանքի... Միջնադարյան թանձր խավարում մարդիկ դեռ չէին տեսնում նրա մեծությունը, ուստի և պատշաճ ձևով չեն գնահատել նրան։ Սակայն նա իր գիտությունը և մատենագրական վաստակներով այնքան խոշոր է եղել, որ նա մեզ երևում է դարերի հեռուներից։

Հայ մատենագրությունը գիտության պատմության գծով ունեցել է շրտ հաստատուն սյունիք, որոնցից մեկը Հովհաննես Սարկավազն է։ Անանիա Շիրակացի, Գրիգոր Մազիստրոս, Հովհաննես Սարկավազ և Հովհաննես Նրզնկացի։

1) Ժամանակագրություն Ստեփանոս Օրբելյանի, Երևան, 1942, էջ 17։

2) P. Somalian, Quadro della storia letteraria d'Armenia, Venezia, 1829, p. 89։

3) ՉՍՍԻ Մատեն. Ձեռ. № 5619, ք. 69 ա։

1) Կիրակոս Դանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 106—107։

2) Փերդալիմյան, Նոտարք, էջ 112 (հմմտ. Տաշյան՝ չույց. էջ 984)։

